Սիպիլ

Հրաժեշտ

«Մնաս բարյա՛վ». ողջույն անդարձ և անգութ
Որ կը հուզես, կը փոթորկես զիս ամբողջ.
Բեկանումներ պատկերելով, ցավեր մութ,
Իր ցողունեն փրթած ծաղիկն ու բողբոջ,
Սրտեր որոնք կուլան դալկոտ ու դողդոջ:

«Մնաս բարյա՛վ», ո՛վ բառ մըռայլ, սրտաթունդ,
Ի՞նչ արցունքոտ տեսիլքներ ցույց կուտաս դուն.
Անջրպետներ, փոսեր, վիհեր, խոր անդունդ,
Որոնց երկու եզերքներեն շատ հեռու՝
Բյուր բազուկներ կը կարկառին իրարու:

«Մնաս բարյա՛վ», ծաղիկ կյանքիս մեջ խաղաղ
Սիրտս իր լույսե երազաներեն չըսթափած,
Այս չարագույժ զանգակն հնաչած է, ավա՛ղ,
Մոռացումի, կործանումի դառն հարված,
Սրտի վերքեր, որոնք երբեք չեն բուժված:

«Մնա՛ս բարյա՛վ». այս բեռեն ես կը սոսկամ...
Ու կը նայիմ դեպի ճամբան հարաբաց,
Ուրկե անցան սիրելիներ շա՛տ անգամ...
Եվ պատկերը, սև շըղարշով ըսքողված՝
Արցունքներուս կը դառնըվի միդամած:

1915